ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2025 թվականի N 1285 - Ա

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՍԻԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասով, 2024 թվականի հունիսի 25-ի «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի կառավարիչների խորհրդի «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» 2017 թվականի N 23 որոշման պայմաններով և դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկին Հայաստանի Հանրապետության բաժանորդագրության գործիքին:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության անունից հանդես գալով որպես լիա-

զորված պաշտոնատար անձ՝ 30-օրյա ժամկետում ստորագրել Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկին Հայաստանի Հանրապետության բաժանորդագրության գործիքը՝ համաձայն հավելվածի։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ